

ԳԻՏԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԻ ԸՄՐՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Ճշմարտությունը փրկիսոփայական ամենահին և նույնքան արդիական պրոբլեմներից է: Այն մարդկային ճանաչողական գործունեության նպատակն է: Առանց ճշմարտության հասկացության, անհնարին է հասկանալ ինչպես գիտական ճանաչողության կառուցվածքը, այդպես էլ զարգացման ընթացքը, նպատակը:

Մարդկությունը վաղ ժամանակներից փորձել է գտնել ճանաչողության այն պատկերը, որը ներկայացնում է գիտական ճշմարտության ձևավորման գործընթացը, դրա ընդունման շափանիշները: Ամեն մի ժամանակաշրջանում այն ունեցել է իր առանձնահատկությունը: Բացառություն չի կազմում նաև ժամանակակից գիտական գիտելիքը, որն իր բնութագրերով որոշակիորեն տարբերվում է ոչ վաղ անցյալի գիտական գիտելիքից:

Այսպես, ժամանակակից գիտական տեսություններն աչքի են ընկնում իրենց հիմնարարությամբ, վերացականությամբ, բարձր կարգի ընդհանրություններով: Նրանց մեջ մեծ շափով տեսական օբյեկտների օգտագործումը, մաթեմատիկական մեթոդների լայն կիրառումը դժվարացրել են գիտական գիտելիքի և իրականության փոխհարաբերության, ճշմարտության հարցի ըմբռնումը: Բացի այդ, հայտնի են դեպքեր, օրինակ՝ ֆիզիկայում, երբ միևնույն էմպիրիկ տվյալները ձևակերպվում են տարբեր տեսությունների տեսքով: Կարելի է արդյոք ասել, որ նշված ձևակերպումներին համապատասխանում են ռեալության տարբեր պատկերներ, տարբեր ճշմարտություններ, որոնցից մեկն ավելի խորը ճշմարտություն է, քան մյուսները, թե այդ տեսությունները միևնույն ճշմարտության տարբեր լեզվական արտահայտություններն են: Արդյո՞ք այդ կարգի տեսությունները հիմնավորվում են միայն սահմանափակ թվով էմպիրիկ տվյալների միջոցով, թե՞ դրանք հիմնավորման արտաէմպիրիկական այլ եղանակներ ունեն:

Գիտելիքի բնույթի բարդությունը և իրականության հետ դրա հարաբերության պարզաբանման դժվարությունները ճշմարտության բազմաթիվ սահմանումների հնարավորություն են ստեղծել: Ճշմարտության սահմանումներից յուրաքանչյուրում հաշվի է առնվում գիտելիքի բարդ կառուցվածքի կողմներից որևէ մեկը և դրանով հակադրվում են ճշմարտության նայիվ ռեալիստական պատկերացումների թերություններին:

Ճշմարտության դասական ըմբռնումը

Ճշմարտության տեսական հետազոտությունն սկսվել է նրա դասական ըմբռնումից, որի համաձայն ճշմարտությունը մտքերի համապատասխանությունն է իրականությանը: Այն ունի իր ինչպես մատերիալիստական, այդպես էլ իդեալիստական մեկնաբանությունները: Դրանց միջև ընդհանուրն այն

է, որ այդ ուղղութիւններն այն համոզմանն են, որ իրականութիւնը կարող է վերարտադրվել գիտելիքների համակարգում:

Ճշմարտութեան դասական ըմբռնումը երբեմն անվանում են ճշմարտութեան համապատասխանութեան, կամ «կորեսպոնդենցիայի» տեսութիւն:

Ճշմարտութեան դասական ըմբռնմանը կարելի է հանդիպել դեռևս անտիկ փիլիսոփայութեան մեջ: Պլատոնին է պատկանում հետևյալ սահմանումը. «... Նա, ով իրերի մասին խոսում է այն բանի համապատասխան, ինչպես դրանք կան, խոսում է ճշմարիտ, իսկ նա, ով խոսում է այլ կերպ, ստում է...»¹:

Ճշմարտութիւնը նման կերպ է բնութագրում նաև Արիստոտելը, որն իր «Մետաֆիզիկա» աշխատութեան մեջ գրում է. «... խոսել գոյութեան մասին, որ այն գոյութիւն չունի, կամ ոչ գոյի մասին, որ այն գոյութիւն ունի, նշանակում է ասել սուտ, իսկ ասել, որ գոյը գոյութիւն ունի, և ոչ գոյը գոյութիւն չունի, նշանակում է խոսել ճշմարիտ»²:

Անտիկ շրջանից ճշմարտութեան այդպիսի ըմբռնումը տիրապետող դարձավ ճանաչողութեան մեջ: Դասական կոնցեպցիայում համապատասխանութեան տակ հասկանում են այն, որ ինչ պնդվում է մտքի կողմից, իրականում տեղի ունի: Տվյալ դեպքում համապատասխանութիւն հասկացութիւնը նույնական է «վերարտադրութիւն» հասկացութեան հետ:

Դասական ըմբռնման հաջորդ կարևոր հասկացութիւնն իրականութիւն կամ ռեալութիւն հասկացութիւնն է: Երբ ճանաչողութեան հիմքերը համարում են արտաքին աշխարհը, այդ դեպքում իրականութիւն հասկացութիւնը նույնացվում է օբյեկտիվ աշխարհ ըմբռնման հետ: Ընդ որում, իրականութեան նկատմամբ այդպիսի հայացքներ պաշտպանել են ոչ միայն մատերիալիստները, այլև օբյեկտիվ իդեալիստները, օրինակ՝ Պլատոնը: Սակայն, իրականութեան հասկացութեան այդպիսի մեկնաբանութիւնը նեղ է: Իրականութիւն ասելով կարելի է հասկանալ ոչ միայն արտաքին աշխարհի տարրերը, այլև այն, ինչն ընդհանրապես տեղի ունի: Այդ դեպքում ճշմարտութեան հասկացութիւնը կիրառելի է ոչ միայն օբյեկտիվ աշխարհին ուղղված մտքերի նկատմամբ, այլև մտային օբյեկտների բնութեան նկատմամբ:

Սկզբնական շրջանում ճշմարտութեան դասական մոտեցման կողմնակիցներն ենթադրում էին, որ մտքի համապատասխանութիւնն իրականութեանը կարելի է հասնել համեմատաբար պարզ եղանակով: Նրանք ելնում էին այն ենթադրութիւնից, որ իրականութիւնը, որի հետ անմիջականորեն գործ ունի մարդը, և որը նրա ճանաչողութեան առարկան է, կախված չէ գիտելիքից: Ենթադրվում է, որ մտքերը կարող են պարզ, միանշանակ համապատասխանութեան մեջ դրվել իրականութեան հետ: Որ գոյութիւն ունի ինտուիտիվ պարզ և կասկած չհարուցող շափանիչ, որը թույլ է տալիս իմանալ համապատասխանում են արդյոք մտքերն իրականութեան հետ, թե՞ ոչ: Տեսութիւնը, որը ճշմարտութիւնը բնութագրում է որպես իրականութեան հետ համապատասխանութիւն, տրամաբանորեն անհակասական է: Սակայն, ճշմարտութեան դասական մոտեցմանը բնորոշ են մի շարք դժվարութիւններ:

Առաջինն անվանում են ճանաչողական ռեալութեան պրոբլեմ: Մարդն իր ճանաչողութեան ընթացքում անմիջականորեն գործ ունի ոչ թե օբյեկտիվ աշխարհի, այլ այն աշխարհի հետ, որն զգայորեն ընկալվում և կոնցեպտուալորեն իմաստավորվում է: Եթե փաստերը օբյեկտիվ աշխարհի տարրեր չեն հանդիսանում, այլ կազմում են ճշմարիտ պնդումների ճանաչողական բովան-

¹ Платон. Соч. в трех томах, т. 1. М., 1968, с. 417:

² Аристотель. Соч. в четырех томах, т. 1: М., 1975, с., 141.

դակությունը, ապա այդ պնդումները շեն կարող ճշմարիտ համարվել փաստերի շնորհիվ, քանի որ ոչ մի էմպիրիկ պնդում չի կարող ճշմարիտ համարվել իր սեփական նշանակության շնորհիվ:

Երկրորդ պրոբլեմը առաջանում է ռեալության հետ մտքերի համապատասխանության կապակցությամբ: Ծճմարտության դասական մոտեցումն իր նայիվ ձևով այդ համապատասխանությունը դիտարկում է որպես ռեալության պարզ պատճենահանում: Իրականության հետ գիտելիքի համապատասխանության հետազոտությունը ցույց է տալիս, որ այն ուղեկցվում է մի շարք կոնվենցիաներով և համաձայնություններով: Արդարացված չէ նաև այն մոտեցումը, որը լեզվական պնդումները համարում է աշխարհի պատճեններ:

Երրորդ պրոբլեմը կապված է ճշմարտության շփանհիշի ընտրության և ինչ-որ շփով առաջին պրոբլեմի հետ: Եթե մարդն անմիջականորեն շփվում է ոչ թե «ինքնին» գոյություն ունեցող աշխարհի, այլ զգայական ընկալիչի կոնցեպտուալիզացված աշխարհի հետ, ապա հարց է առաջանում, թե նա ինչպես կարող է ստուգել՝ համապատասխանում են արդյոք իր պնդումները հենց օբյեկտիվ աշխարհի հետ, թե՞ ոչ: Ծճմարտության շփանհիշի պրոբլեմը չի սպառվում նշված ասպեկտներով: Դեռևս հին աշխարհի սկեպտիկները ուշադրություն դարձրեցին այն բանի վրա, որ ճշմարտության շփանհիշի հարցադրումը բերում է անսահման ռեգրեսի պարադոքսին: Սեքստ էմպիրիկը գտնում էր, որ որևէ պնդման ճշմարտության ապացուցման համար անհրաժեշտ է ընդունել ճշմարտության շփանհիշ: Սակայն, այդ շփանհիշը, որը ճշմարիտ պնդումների ճանաչման մեթոդ է, պետք է ապացուցվի մեկ այլ ճշմարտության շփանհիշի հիման վրա և այլն, մինչև անսահմանություն:

Քսաներորդ դարում Սեքստ էմպիրիկի փաստարկը վերածնվեց տրամաբան նելսոնի կողմից, որն այդ հիմքի վրա ձևակերպեց «նելսոնի պարադոքսը»⁸:

Նշված դժվարությունները փիլիսոփաներին մղեցին երկակի գործունեության. առաջին՝ դասական ըմբռնման կատարելագործմանը, զարգացմանն այնպես, որ դժվարությունները հաղթահարվեն առանց այդ մոտեցման էական սկզբունքներից հրաժարվելու: Երկրորդ՝ դասական մոտեցման քննական հաղթահարմանը՝ այն փոխարինելով այլընտրանքային (ոչ դասական) կոնցեպցիաներով:

Ծճմարտության կոհերենտության ուսմունք

Ծճմարտության դասական մոտեցման այլընտրանքային ուղղություններից մեկը կոհերենտության ուսմունքն է, որը ճշմարտության հարցը հանգեցնում է գիտելիքի ինքնահամաձայնեցմանը, անհակասականությանը: Տարբերում են ճշմարտության կոհերենտության ուսմունքի երկու տարատեսակ: Մեկը ճշմարտության նոր ըմբռնումը դիտարկում է որպես գիտելիքի կոհերենտություն, որը փոխարինում է գիտելիքն իրականության հետ համապատասխանեցնելու նախկին մոտեցումը: Մյուս տարատեսակը, թեև պահպանում է ճշմարտության դասական մեկնաբանությունը, այդուամենայնիվ պնդում է, որ իրականության հետ գիտելիքի համապատասխանությունը կարող է հաստատվել միայն կոհերենտության միջոցով, որը հանդես է գալիս որպես ճշմարտության շփանհիշ:

Կոհերենտության ուսմունքի հիմնադիրներից է Ի. Կանտը: Նրա կարծի-

⁸ Տե՛ս Զ. Մ. Чудинов, Природа научной истины. М., 1977, էջ 19:

քով ճշմարտության այն բովանդակումը, որի համաձայն դա գիտելիքի համապատասխանությունն է օբյեկտի հետ, անիրականալի է: Մեր գիտելիքը, զբոսնում է Կանտը, կարող ենք համեմատել օբյեկտի հետ այն բանի շնորհիվ, որ մենք այդ օբյեկտը ճանաչում ենք: Դա նշանակում է, որ մեր գիտելիքը հաստատում է ինքն իրեն, որն անբավարար է ճշմարտության համար: Այդ կապակցությամբ նա գրում է. «Քանի որ օբյեկտը գտնվում է ինձանից դուրս, իսկ գիտելիքը՝ իմ մեջ, ապա ես կարող եմ դատել միայն այն բանի մասին, թե համաձայնվո՞ւմ է արդյոք օբյեկտի մասին իմ գիտելիքն օբյեկտի մասին իմ գիտելիքի հետ»⁴: Նրա կարծիքով անհրաժեշտ է տարբերել այն, ինչը պատկանում է մեր գիտելիքի մատերիային՝ օբյեկտին, նրանից, ինչը վերաբերում է միայն ձևին, առանց որի այդ գիտելիքը չի կարող գիտելիք լինել:

Այդ իմաստով, գտնում է նա, եթե օբյեկտների տարբերությունից վերացարկվող ճշմարտության համընդհանուր շափանիշ առաջադրելն անհնարին է, նույնիսկ անիմաստ, ապա ճշմարտության ձևական շափանիշների առաջադրելը հնարավոր է, «որքանով որ ձևական ճշմարտությունը գիտելիքի համապատասխանությունն է միայն ինքն իր հետ՝ լրիվ վերացարկված բոլոր օբյեկտներից և դրանց բոլոր տարբերություններից»⁵: Կանտի կարծիքով, ճշմարտության համընդհանուր ձևական շափանիշներն ոչ այլ ինչ են, քան ինքն իր հետ կամ, որ նույնն է, բանախոհության ու բանականության համընդհանուր օրենքների հետ գիտելիքների համապատասխանության ընդհանուր տրամաբանական հատկանիշները: Նա առաջադրել է հետևյալ ճշմարտության ձևական կամ տրամաբանական շափանիշները՝ հակասականության օրենքը, բավարար հիմունքի օրենքը և երրորդի բացառման օրենքը: Ինչպես նկատելի է, Կանտը գիտելիքի ճշմարտության շափանիշի հարցը հանգեցնում է գիտելիքի տրամաբանորեն ճիշտ կառուցման հարցին:

Քսաներորդ դարում ճշմարտության կոհերենտության ուսմունքը նոր ձևավակերպում ստացավ նեոպոզիտիվիզմի կողմնակիցների կողմից: Կոհերենտության տեսության նեոպոզիտիվիստական տեսակետը ելնում է այն բանից, որ միայն մետաֆիզիկայում է փորձ արվում նախադասությունը համեմատել ռեալ աշխարհի հետ: Պոզիտիվ գիտությունը պետք է մի նախադասությունը համեմատի այլ նախադասությունների հետ: Այդ տեսակետն առանձնապես պաշտպանվել է Օ. Նեյրատի կողմից, որը նկատելի է, որ ասույթները կարող են համեմատվել միայն ասույթների հետ և ոչ թե իրականության ու փորձի հետ: Քննադատելով վաղ Ռ. Կառնապին, որը գտնում էր, թե գիտական գիտելիքն ամբողջովին կարելի է հանգեցնել արձանագրային (պրոտոկոլային) նախադասություններին՝ դիտարկումների նախադասություններին, Օ. Նեյրատը նշեց, որ գոյություն չունեն անկասկածելի, զուտ արձանագրային նախադասություններ: Այդ նախադասությունները կարող են լինել ինչպես ճշմարիտ, այնպես էլ սխալ:

Գիտական գիտելիքի ճշմարտությունը, ըստ Նեյրատի, ոչ թե գիտելիքի համապատասխանություն է իրականությանը կամ գիտելիքի որևէ մասի հետ, որի ճշմարտությունը բացարձակ է, այլ այն, որ ողջ գիտելիքն ինքնահամաձայնող, անհակասական համակարգ է: Հենց այդ ինքնահամաձայնող համակարգը կամ կոհերենտությունն այն ռեֆերենտն է, որին վերաբերում է ճշմարտության հասկացությունը⁶:

Ճշմարտության կոհերենտության ուսմունքի երկրորդ տարբերակի կողմ-

⁴ И. Кант. Трактаты и письма. М., 1980, с. 389.

⁵ Նույն տեղում, էջ 358:

⁶ S. u. O. Weurath, Protokollsätze.— «Erkenntnis», 1932, Bd. 3.

նակիցներ համարվում են էլեատները⁷: Պարմնիդը և Ջենոնը թեև ոչ ակնհայտ ձևով ընդունել են, որ ճշմարտությունը դա գիտելիքի համապատասխանությունն է իրականությանը: Սակայն նրանք գտել են, որ այդ համապատասխանության հետ կարելի է համոզվել ոչ թե դիտարկման միջոցով, որը հավաստի գիտելիք չի տալիս, այլ գիտելիքի անհակասականության բացահայտմամբ: Ըստ նրանց, հակասական գաղափարները ռեֆերենտ չունեն ռեալ աշխարհում: Միաժամանակ, գաղափարների անհակասականությունը հավաստում է իրերի ռեալ վիճակի ճիշտ նկարագրությունը:

Ճշմարտության կոհերենտության տեսության այդ տարատեսակը վերափոխված տեսքով ընդունվում է նաև ժամանակակից արևմտյան որոշ փիլիսոփաների և տրամաբանների կողմից: Մասնավորապես, դրանց թվին պատկանում է Ն. Ռեշերը⁸:

Ճշմարտության կոհերենտության ուսմունքը նույնպես ունի իր դժվարությունները: Այդ ուսմունքի որոշ ներկայացուցիչներ ճշմարտության պրոբլեմը փորձում են լուծել միայն տրամաբանական իմաստով: Սակայն կոհերենտության, այսինքն՝ անհակասականության պրոբլեմի, որպես տրամաբանական խնդրի լուծումը բավականին բարդ է: Բացի այդ, կարելի է կառուցել գիտելիքի բազմաթիվ անհակասական համակարգեր, որոնցից ոչ ամեն մեկն է համապատասխանում օբյեկտիվ իրականությանը: Հայտնի է, որ ժամանակակից բնագիտության մեջ միևնույն բնագավառը կարող է ներկայացվել մի շարք անհակասական, սակայն միմյանցից տարբեր տեսությունների միջոցով: Միաժամանակ, ժամանակակից բնագիտության մեջ որևէ տեսության հակասականություն չի նշանակում դրա անմիջական սխալություն: Այն կարող է պայմանավորված լինել ժամանակավոր դժվարություններով: Այսպիսով, կարելի է ամրագրել, որ գիտելիքի անհակասականությունն անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ գիտելիքը ճշմարիտ ճանաչման համար:

Ճշմարտության պրագմատիստական ուսմունք

Ճշմարտության պրագմատիստական մոտեցումը ինչ-որ իմաստով մոտ է կոհերենտության ուսմունքին: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքում շեշտվում է սուբյեկտի ակտիվ դերը ճանաչողության մեջ: Սակայն դրանք տարբերվում են շեշտերով: Կոհերենտության ուսմունքում սուբյեկտի ակտիվությունը կախվածության մեջ է դրվում մտածողությունից և սուբյեկտին ներկայանում է կոնցեպտուալիզացված ձևով: Այդպիսի ակտիվությունն ունի ռացիոնալիստական բնույթ: Պրագմատիզմի կողմնակիցները (Չ. Պիրս, Ու. Ջեյմս), ընդգծելով պրակտիկ ակտիվությունը ճանաչողության պրոցեսում, բացառում են դասական իմաստով ճշմարտության հասնելու հնարավորությունը: Ճշմարտության պրագմատիստական ուսմունքը ճշմարտության էությունը տեսնում է «վերջնական շափանիշների» հետ դրա համաձայնության մեջ: Վերջնական շափանիշ համարվում է տվյալ գործողության համար պընդման օգտակարությունը: Նրանց փաստարկն այսպիսին է: Եթե մեր համոզմունքներն ազդում են մեր գործողությունների վրա և դրանց տալիս են ուղղվածություն՝ նշելով այն միջոցները, որոնք բերում են այդ նպատակին, և եթե այդ ազդեցությունը գործողությունը դարձնում է արդյունավետ, ապահովում է հասնելու նշված նպատակին, ապա մեր համոզմունքը ճշմարիտ է:

Որոշ պրագմատիստներ շեն մերժում ճշմարտության դասական մոտե-

⁷ Տե՛ս Յ. Մ. Чудинов, Природа научной истины, էջ 22:

⁸ N. Rescher, The coherence theory of truth, Oxford, 1973.

ցումը: Օրինակ, Ու. Զեյմսը գտնում է, ինչպես և փիլիսոփաների մեծ մասը, որ ճշմարտությունը գաղափարների համապատասխանությունն է օբյեկտին: Սակայն, պրագմատիզմի համաձայն, օգտակարությունը չի հանդիսանում ոչ չափանիշ, ոչ էլ համահարաբերակցություն (կորելյատ) գիտելիքների ճշմարտության հասկացման համար: Այլ կերպ ասած՝ այդ տեսակետի համաձայն չի կարելի պնդել, որ գիտելիքը, որն օժտված է օգտակարության հատկությամբ, համապատասխանում է ռեալությանը: Նրանք գտնում են, որ արտաքին աշխարհի ռեալությունն անհասանելի է մարդու համար, որքանով մարդը գործ ունի իր գործունեության հետ: Այդ պատճառով միակ բանը, որ նա կարող է հաստատել, դա ոչ թե գիտելիքների համապատասխանությունն է իրականությանը, այլ դրա արդյունավետությունը, պրակտիկ օգտակարությունը: Հենց օգտակարությունն է մարդկային գիտելիքի հիմնական արժեքը, որն արժանի է համարել ճշմարիտ:

Ճշմարտության դիալեկտիկա-մատերիալիստական ուսմունքը

Ճշմարտության դիալեկտիկա-մատերիալիստական ուսմունքը ճշմարտության դասական կոնցեպցիայի ժառանգորդն է: Այդ մոտեցման համաձայն, ճշմարտությունն օժտված է օբյեկտիվության հատկանիշով. նրա բովանդակությունն անկախ է ինչպես մարդու, այնպես էլ մարդկության գիտակցությունից: Այսինքն՝ գիտելիքներին բնորոշ է օբյեկտիվ աշխարհին համապատասխանելու հատկությունը:

Նորհրդային փիլիսոփայական գրականության մեջ ընդունված ճշմարտության սահմանումները բաժանվում են շորս խմբի⁹: Աաջին խմբի մեջ մտնում են այն սահմանումները, որոնք ճշմարտությունը բնութագրում են համապատասխանություն հասկացության միջոցով: Երկրորդ խմբի մեջ մտնում են այն սահմանումները, որոնցում համապատասխանություն հասկացությունն այս կամ այն չափով ճշգրտվում է արտացոլում, ադեկվատություն, իզոմորֆիզմ, հոմոմորֆիզմ հասկացությունների միջոցով: Երրորդ խմբի սահմանումներում նշվում են, որ գիտելիքը ոչ միայն գիտելիք է, որը համապատասխանում է իրականությանը, այլև գիտելիք, որն ունի մի շարք այլ լրացուցիչ հատկանիշներ՝ պատճառական պայմանավորվածություն, առարկա և այլն: Չորրորդ խմբին պատկանում են այն սահմանումները, որոնք ճշմարտությունը բնութագրում են որպես իրականության ճիշտ արտացոլում: Այդ սահմանումներն էապես շեն տարբերվում միմյանցից. դրանց համար բնորոշ է իրականության հետ գիտելիքների նույնական համապատասխանության հատկանիշը, որը, ըստ էության, Վ. Ի. Լենինի կողմից ճշմարտությանը տրված բնութագրի այլատեսակությունն է: Լենինը գրել է, որ ճշմարտության հասկացությունը բնութագրում է մարդկային պատկերացումների այնպիսի բովանդակությունը, որը կախված չէ ոչ սուբյեկտից, ոչ մարդուց, ոչ էլ մարդկությունից¹⁰: Հարց է առաջանում, ինչպե՞ս կարող են մարդկային պատկերացումները, գիտելիքներն ունենալ նրանից միանգամայն անկախ բովանդակություն: Ոմանք գրտնում են, որ ճշմարտության արտահայտման ձևն անշուշտ սուբյեկտիվ է, այսինքն՝ կախված է այն մարդկանց առանձնահատկություններից, որոնք ձևավորում են տվյալ տեսությունը, սակայն բովանդակությունը՝ ոչ¹¹: Բայց, ըստ

⁹ Տե՛ս Զ. Մ. Чудинов, Природа научной истины, էջ 36:

¹⁰ Տե՛ս В. И. Ленин, Полн. собр. соч., т. 18, էջ 123:

¹¹ А. А. Радугин, Философия. М., 1996, с. 169.

հենց դիալեկտիկական մատերիալիզմի, ձևը կախված է բովանդակությունից և հակառակը:

Հաջորդ դժվարությունը կապված է այն բանի հետ, թե ինչպես կարող ենք ստուգել, պարզաբանել գիտելիքի՝ իրականության հետ համապատասխանելու, դրա օբյեկտիվ բովանդակության հարցը: Մարքսիզմը որպես այդպիսի միջոց առաջադրում է հասարակական-պատմական պրակտիկայի ըմբռնումը: Ըստ այս ուղղության կողմնակիցների, դա այն միջոցն է, որը հնարավորություն է տալիս հաղթահարելու ճշմարտության դասական ըմբռնման հետ կապված դժվարությունները: Կ. Մարքսն իր «Ֆոյերբախի մասին թեզիսներում» նշել է, որ այն հարցը, թե օժտված է, արդյոք, մարդկային մտածողությունն առարկայական ճշմարտությամբ, չի կարող լուծվել իր մտածողության շրջանակներում: Այդ տեսակետից խորհրդային փիլիսոփաները հակադրվել են արևմտյան այն մտածողներին, որոնք գիտական գիտելիքի ճշմարտության միջոց համարել են փորձի, էքսպերիմենտի արդյունքների հետ գիտելիքի համադրումը: Քննադատության հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ փորձի, էքսպերիմենտի արդյունքներն ունեն տեսական ծանրաբեռնվածություն, հետևաբար, եզրակացնում են նրանք, դրանք չեն կարող հանդես գալ որպես տեսական գիտելիքի շեզոք ստուգման, հիմնավորման միջոցներ: Մարքսիստները պրակտիկայի տակ հասկանում են ոչ թե աշխարհի պասիվ հայեցողական ընկալումը, այլ ակտիվ գործունեություն, որն ուղղված է նյութական աշխարհի՝ ինչպես բնության, այնպես էլ սոցիալական միջավայրի վերափոխմանը:

«Մարդն աշխարհի վերափոխման պրոցեսում ստեղծում է նոր ուսուցում՝ նյութական և հոգևոր կուլտուրայի աշխարհ, գոյության նոր պայմաններ, որոնք նրան տրված չեն բնության կողմից պատրաստի տեսքով: Ստեղծելով այդ նոր ուսուցումը՝ մարդը զարգացնում ու կատարելագործում է ինքն իրեն, իր ստեղծագործական կարողությունները»¹²: Նրանք պրակտիկական բնութագրում են որպես գործունեություն, որն իր մեջ ներառում է՝ 1) արհեստական ստեղծված գործիքների և միջոցների միջոցով արտաքին միջավայրի ուսուցումը (սուբյեկտ-օբյեկտային հարաբերություն), 2) այդ վերափոխման պրոցեսում միմյանց հետ մարդկանց շփում (սուբյեկտ-սուբյեկտային), 3) նորմերի և արժեքների համախմբություն (արժեքային-նպատակային), որոնք գոյություն ունեն գիտակցության պատկերների ձևով և ապահովում են պրակտիկ գործունեության նպատակահարմար բնույթը: «Պրակտիկայում, — գրում է Մարքսը, — մարդը պետք է ապացուցի ճշմարտությունը, այսինքն՝ իր մտածողության այսկողմնայնությունը, հզորությունը և իրականությունը: Պրակտիկայից մեկուսացված մտածողության իրական կամ ոչ իրական լինելու վեճը զուտ սխալաստիկական հարց է»¹³: Իացի այդ, մարքսիստները նշում են, որ պրակտիկական համարժեք չէ էմպիրիկ ճանաչողությանը: էմպիրիկ գիտելիքը մարդկային աշխարհի իդեալական վերարտադրությունն է: Ի տարբերություն դրա, պրակտիկական մարդկանց նյութական-առարկայական գործունեության օբյեկտիվ պրոցեսն է, որն իրականացնում է գիտական տեսության ճշմարտության ստուգումը: Պրակտիկայում տեղի է ունենում ստուգման ենթակա գիտելիքների նյութական մարմնացումը: Միաժամանակ, պրակտիկական օբյեկտիվ ֆենոմեն է, որը պատկանում է նյութական աշխարհին և ֆունկցիոնավորվում է նրա օրենքների համաձայն: Պրակտի-

¹² Введение в философию. Учебник для высших учебных заведений, ч. 2, М., 1989, с. 272.

¹³ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, с. 1—2.

կայի այս բնույթն ապահովում է ճշմարտության շահանիշի դերը, ռեալ աշխարհի մասին գիտելիքը, որը մարմնավորված է պրակտիկայում, վերահսկվում է այդ աշխարհի օրենքներով¹⁴:

Պրակտիկայի ըմբռնումը իր ամբողջ պաթոսով ուղղված է ազնոստիցիզմի դեմ, և դրա միջոցով ցույց է տրվում իդեալականի և օբյեկտիվ իրականության հնարավոր կապը: Սակայն, այն շատ ընդհանուր է և անխոցելի չէ: Այսպես, գիտության ռեալ պրակտիկայում գիտնականների կողմից ստացված գիտելիքները գնահատվում են ճշմարիտ կամ ոչ ճշմարիտ՝ չսպասելով դրանց համար կիրառումներ գտնելուն: Այժմ գիտությանը հայտնի են այնպիսի վերացական տեսություններ, որոնց համար օբյեկտիվ աշխարհում նյութական մարմնավորում գտնելու հարցը միայն զարմանք կարող է հարուցել: Բացի այդ, նյութական և սոցիալական աշխարհում մարդկության կողմից կատարված ակտիվ գործունեության ոչ բոլոր ակտերը կարելի է դրական և ճշմարիտ համարել: Մասնավորապես կարելի է հիշատակել մարդկության առջև այժմ կանգնած էկոլոգիական դժվարությունները և պատմության մեջ նրանց կողմից կատարված բազմաթիվ շարագործությունները:

Միաժամանակ հարց է առաջանում, արդյո՞ք մեր գործունեությունն անկախ է մեր մտածողությունից, գիտելիքներից, սոցիալ-մշակութային միջավայրից: Միանշանակ կարելի է ո՛չ պատասխանել: Մարդկության կողմից ստեղծված բոլոր իրերը, գործիքները, տեխնիկական, մշակութային արժեքները, միջավայրը իրենց վրա կրում են ժամանակի ազդեցությունը: Այդ պատճառով մարդկային գործունեությունը չի կարելի չեզոք, բացառիկ միջոց համարել գիտելիքների, առավել ևս գիտական գիտելիքների ստուգման համար: Չի կարելի չհիշատակել նաև այն փաստը, որ պրակտիկ գործունեության մեջ նյութական-առարկայական կողմի շեշտումը և բացարձակացումը խորհրդային Միության մեջ բերեց տեսական մտածողության, մտավորականության դերի նսեմացմանը և բանվոր դասակարգի դերի գերազանհատմանը:

Պրակտիկայի ըմբռնման դրական դերն այն է, որ դրվում է գիտելիքի, գիտական գիտելիքի կիրառման տեսակետից դրա գնահատման հարցը: Իրոք, գիտության մեջ բարձր են գնահատվում այն գիտելիքները, տեսությունները, որոնք կարող են կիրառվել այլ տեսությունների, բնագավառների, խնդիրների լուծման դեպքում, առավել ևս, երբ դրանք օգտագործվում են նյութական արտադրության ոլորտում, նյութական և հոգևոր բարիքներ ստեղծելիս: Սակայն, դա գիտական գիտելիքի ֆունկցիաներից մեկն է, և դրանով մարքսիզմը մոտենում է պրագմատիզմին, որը բացարձակացնում է գիտելիքի, գիտական գիտելիքի օգտակարության, արդյունավետության հատկությունները:

Գիտական տեսության հիմնավորումը և ճշմարտության շափանիշները

Հոգվածում պաշտպանվում է այն տեսակետը, որ գիտելիքի ճշմարտությունը պետք է դիտել որպես հարաբերություն գիտելիքի և իրականության միջև: Ընդ որում, իրականություն ասելով կարելի է հասկանալ ոչ միայն օբյեկտիվ աշխարհը, այլև այն ամենը, ինչի մասին մենք կարող ենք գիտելիք, ռեֆերենտ ունենալ: Օրինակ, գրականության տարբեր ժանրերը իրականություն են գրականության տեսության համար, արվեստի գործերը՝ արվեստագիտության համար և այլն:

¹⁴ Э. М. Чудинов, Природа научной истины, с. 120.

Սակայն ճշմարտությունը՝ գիտելիքի և իրականության, ռեֆերենտի հարաբերությունը կարելի է պարզաբանել ելնելով գիտելիքի, նրա հիմնավորման հիմքերի արտածումից: Ընդ որում, մենք այն տեսակետի կողմնակից ենք, որ գիտական գիտելիքի ճշմարտությունն անմիջականորեն կախված է մարդկայինից, նրա հասարակական, հոգեբանական, մշակութային արժեքների համակարգից, որ ճշմարտության ընդունողը, ճանաչողը մարդն է, մարդկային բանականությունը, մարդկային որոշակի հասարակությունն իր հոգեբանական, մշակութային համատեքստով: Այսինքն՝ մենք գործ ունենք ոչ թե «մերկ», մարդկային բանականությունից անկախ ճշմարտության հետ, այլ որոշակի համակարգի տեսակետից ընդունելի, ճանաչելի դարձող գիտելիքների ձևի հետ: Հենց այդ գաղափարը՝ ճշմարտության հարաբերական բնույթն է շեշտվում այն փիլիսոփայական ուղղությունների կողմից, որոնք գիտելիքի ընդունումը, ճանաչումը կապում են տվյալ «լսարանի», «գիտնականների միաբանության» հետ: Այդ մոտեցման համաձայն, դրույթը, փաստարկը, գիտական գիտելիքը ճշմարիտ է ճանաչվում այն դեպքում, երբ դրանում համոզվում են տվյալ «լսարանի», «գիտնականների միաբանության», հասարակական խմբի անդամները: Նկատենք, որ այդօրինակ մոտեցումը բերում է ոչ թե ճշմարտության սուբյեկտիվ ըմբռնմանը, այլ արձանագրում է դրա մարդկային բնույթը: Ընդ որում, դա ոչ թե անհատ մարդու համոզմունք է, այլ հասարակական որոշակի խմբի կամ, ընդհանրապես, հասարակության համոզմունք, այսինքն՝ օբյեկտիվացված գիտելիք, ճշմարտություն է: Գիտելիքների ընդունման, ճանաչման այդօրինակ մոտեցումը կարելի է դիտել որպես տվյալ մարդկային միաբանության «լսարանի» համընդհանրականությունը և անհրաժեշտությունն ապահովող պահանջ: Կարելի է ասել, որ տվյալ փաստարկը, դրույթը, գիտելիքի ձևը ճշմարիտ է, համոզեցուցիչ է, եթե այն ընդունվում, ճանաչվում է տվյալ «լսարանի», «գիտական միաբանության» և ընդհանրապես հասարակության կողմից, այսինքն՝ համընդհանրական է և անհրաժեշտ: Դա նշանակում է, որ հասարակության տվյալ խմբի հիմնական մասը ընդունում, ճանաչում է այդ կարծիքը, տեսակետը: Ճանաչողության սկզբում առաջադրված փաստարկը, դրույթը, գիտելիքը, կարծիքը, երբ ճանաչողության վերջում ազատ, առանց շահի և ստիպողականության, ինքնակամ ընդունվում, ճանաչվում է հասարակական տվյալ խմբի՝ «լսարանի» կողմից, վերածվում է համոզմունքի, այսինքն՝ դառնում է համընդհանրական և անհրաժեշտ, ճշմարիտ: Այդ դեպքում ճանաչողությունը կարծիքից համոզմունքին, հավանական գիտելիքից հավաստի, ճշմարիտ գիտելիքին, այսինքն՝ համընդհանրական և անհրաժեշտ գիտելիքին անցնելու գործընթաց է:

Հարցը կարելի է ձևակերպել նաև այսպես, թե մենք ինչ հիմքերով ենք ընդունում գիտելիքի ճշմարտությունը: Հետևելով Կանտին, մենք ևս գտնում ենք, որ դրանք երկուսն են՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Նախքան հաջորդ քայլը կատարելը, պարզաբանենք ի. Կանտի ուսմունքում տեղ գտած որոշ հասկացությունների կապը:

Եթե կարծիքը Կանտի համար որևէ բանի ճշմարիտ ճանաչումն է, որն անբավարար է ինչպես սուբյեկտիվ, այդպես էլ օբյեկտիվ հիմքերով, ապա համոզմունքը գիտելիքի ճշմարիտ ճանաչումն է օբյեկտիվ բավարար հիմքերի առկայության դեպքում: Եթե դատողությունը, — գրում է Կանտը, — նշանակություն ունի բանականությամբ օժտված յուրաքանչյուրի համար, ապա այն ունի օբյեկտիվ բավարար հիմքեր: Դրա օբյեկտիվության ճանաչումն անվանվում է համոզմունք»¹⁵: Նույն կերպ հավանականությունը նա դիտար-

¹⁵ И. Кант, Соч. в шести томах, т. 3, М., 1964, с. 672.

կում է ոչ թե ինքնին, այլ որպես գործընթաց՝ ձգտում դեպի հավաստիությունը: Վերջինս ճշմարտության այնպիսի ճանաչում է, որը բավարար է ինչպես օբյեկտիվ, այդպես էլ սուբյեկտիվ հիմքերով: «Հավանականություն ասելով, — գրում է Կանտը, — անհրաժեշտ է հասկանալ ճշմարտության ճանաչում անբավարար հիմքերով, սակայն դրանք ավելի մեծ շահով կապված են բավարար հիմքերի հետ, քան հակառակը»¹⁶: Դրանով նա հավանականությունը տարբերում է պարզ երևութականությունից, որը ճշմարտության ճանաչում է անբավարար հիմքերով, երբ դրանք ավելի մեծ են, քան հակառակ հիմքերը: Հավանականության դեպքում ճշմարտության ճանաչումն ունի օբյեկտիվ նշանակություն, երևութականության դեպքում՝ սուբյեկտիվ: Երևութականությունը վստահության մեծությունն է, իսկ հավանականությունը՝ դեպի հավաստիությունն ունեցած ձգտումը: Այդպիսի հատկությամբ օժտված են գիտելիքի այնպիսի ձևերը, ինչպիսիք են հիպոթեզները, որոնց ճշմարտության ճանաչման աստիճանը կապված է անբավարար հիմքերի առկայության հետ: Եվ քանի որ, ըստ Կանտի, մենք երբեք չենք կարող որոշարկել, բնութագրել բոլոր հիմքերը, ապա հիպոթեզները միշտ կմնան հիպոթեզներ, այսինքն՝ ենթադրություններ, որոնց հավաստիությանը երբեք չի կարելի հասնել: Դա նշանակում է, որ մենք, ըստ Կանտի, երբեք չենք կարող տեսություն ունենալ, այսինքն՝ բավարար հիմքեր, գիտելիքի այդ ձևը հավաստի, ճշմարիտ ճանաչելու համար: Սակայն, ինչպես հայտնի է, գիտության զարգացումը բերեց ոչ միայն գիտության ավելի հասուն, կատարյալ ձևի՝ տեսության ձևավորմանը, այլև որոշ բնագավառներում նաև տեսության համակարգի առաջացմանը: Դա նշանակում է, որ գիտության ունի պրակտիկայում գտնում են, որ կան օբյեկտիվ և սուբյեկտիվ բավարար հիմքեր գիտելիքի այդ ձևը հավաստի, ճշմարիտ ճանաչելու համար:

Ի՞նչ ենք հասկանում հիմքեր ասելով: Դա մեր կարծիքով, հուսալի, վերարտադրելի, կայուն, ակնհայտ, ստուգելի, օբյեկտիվ մտքի կամ գիտելիքի ձևերն է, որոնց վրա խարսխված են ավելի բարդ մտքի կամ գիտելիքի ձևերը, և որոնց ամբողջությունն անհրաժեշտ և բավարար է տվյալ մտքի կամ գիտելիքի ձևերը ճշմարիտ ճանաչելու համար: Ընդ որում, գիտելիքի տվյալ ձևի ճշմարիտ ճանաչման համար կարևոր է ոչ միայն դրա հիմքերի մատնանշումը, այլև այն եղանակների և միջոցների ցուցադրումը, որոնք հնարավորություն են տալիս կամ ակնհայտ հիմքերից բխեցնել գիտելիքի այդ ձևը, կամ ավելի բարդ գիտելիքի ձևը հանգեցնել արդեն հուսալի, կայուն, ճանաչված գիտելիքի ձևերին, հիմքերին, այսինքն՝ դրանք հիմնավորել: Այսպիսով, գիտելիքի ճշմարիտ ճանաչման համար կարևոր է նաև հիմնավորման գործընթացի ինչպիսին լինելը: Եթե այն խիստ է և հետևողական, եթե այդ գործընթացը մեզ համար ակնհայտ է դարձնում, որ հիմքից հիմնավորվող գիտելիքին անցնելիս հիմքի ճշմարտությունը դրան փոխանցվում է անընդհատ կերպով, առանց նենգափոխման, ապա դա մեզ համոզում է գիտելիքի տվյալ ձևի ճշմարիտ լինելը: Ընդ որում, հիմնավորման դեպքում անհրաժեշտորեն մատնանշվում են նաև հիմքերը: Ուստի բնական կլինի ասել, որ գիտելիքը ճշմարիտ է, եթե այն ունի բավարար օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմնավորվածություն: Որքանով, որոշ դեպքերում, օբյեկտիվության տակ հասկանում են գիտելիքի համընդհանրականությունը և անհրաժեշտությունը, իսկ սուբյեկտիվ հիմքերի առկայությունը կապվում է համոզականության հետ, ապա մեր կողմից վերը բերված գիտելիքի ճշմարտության սահմանումը կընդունի այսպիսի տեսք: Գիտելիքը, գիտական գիտելիքը համապատասխան-

¹⁶ И. Кант. Трактаты и письма, М., 1980, с. 389,

նում է իրականությունը, ճշմարիտ է ճանաչվում տվյալ «լսարանում», եթե այն բավարար հիմնավորված է, համընդհանրական է և անհրաժեշտ, համոզեցուցիչ:

Գիտական պրակտիկայում որպես գիտելիքի ամենակատարյալ, հավաստի, ճշմարիտ ձև ճանաչվում է գիտական տեսությունը: Կարելի է որպես ելակետ վերցնել արդեն ձևավորված, համակարգված կատարյալ, համընդհանրական և անհրաժեշտ, ճշմարիտ ճանաչված գիտելիքի ձևը՝ տիպական գիտական տեսությունն իր գոյություն հարաբերություններով, և փնտրել այն հիմքերը, հիմնավորման միջոցները, որոնք թույլ են տալիս դա գնահատել այդպիսին: Այսինքն՝ ելնելով գիտական տեսության գոյության փաստից, կարելի է հանգել դրա այն հիմնավորման միջոցների, հիմքերի արտածմանը, որոնք ապահովում են տվյալ գիտելիքի այդպիսին լինելը: Այդ հիմքերը, հիմնավորման եղանակները միաժամանակ կհանդիսանան գիտելիքի այդ ձևի գնահատման միջոցները, ճշմարտության չափանիշները:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տիպական գիտական տեսության հիմնավորման միջոցները, ճշմարտության չափանիշները այսպիսիք են, 1) ներտեսական, կառուցվածքային ճշտությունը, այդ թվում դրա պարզությունը, 2) գիտական տեսության էմպիրիկ հիմնավորվածությունը, 3) գիտական տեսության տեսական հիմնավորվածությունը, 4) գիտական տեսության պատմական հիմնավորվածությունը, 5) գիտական տեսության պրակտիկ հիմնավորվածությունը, այսինքն՝ դրա բացատրման, կանխատեսման, կիրառման և այլ ֆունկցիաների հնարավորությունները¹⁷:

Գիտական գիտելիքի այդ չափանիշները պետք է դիտել միասնության և պատմական գործընթացի մեջ:

А. С. КАЗАРЯН—Об одном из пониманий научной истины.— Обсуждая исторически сложившееся понимание истины, автор выдвигает свое определение научной истины.

Научное знание — истина, если оно соответствует действительности; оно признается истинным для данной «аудитории», если достаточно обоснованно, всеобще, необходимо и убедительно.

Автор выдвигает следующие критерии научной истины:

внутриструктурная правильность построения научной теории, в том числе ее простота; эмпирическая обоснованность научной теории; теоретическая обоснованность научной теории; историческая обоснованность научной теории; практическая обоснованность научной теории, т. е. возможность ее объяснения, предвидения, применения и других функций.

Отмеченные критерии истинности научного знания должны рассматриваться в их единстве и историческом развитии.

¹⁷ Գիտական տեսության չափանիշների մասին ավելի մանրամասը տե՛ս Ա. Ս. Ղազարյան, Գիտական գիտելիքի համոզականության չափանիշները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1991, № 3, էջ 182.—191: